Ա. Ա. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

ՏԱԹԵՎԻ ՎԱՆՔԻ ԶԱՆԳԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1969 թ. ապրիլ-հունիս ամիսներին Մշակույթի հուշարձանների վերականգնման հատուկ գիտա-արտադրական արվեստանոցի արշավախումբը[1] *պեղումներ կատարեց միջնադարյան Հայաստանի վանական խոշոր կենտրոններից մեկում՝ Տաթևում (Գորիսի շրջան)։ Գլխավոր՝ Պողոս-Պետրոս եկեղեցու արևմտյան մասում XIX դ. վերջին—XX դ. սկզբներին կառուցված և 1931 թ. երկրաշարժից փուլ եկած եռահարկ զանգակատան փլատակները մաքրելու ժամանակ գտնվեց երկու մեծ զանգ, որոնք մինչև երկրաշարժը կախված են եղել զանգակատանը։ Զանգերը հայտնաբերվեցին զանգակատան սալահատակի վրա, եկեղեցու մուտքի մոտ, հինգ մետր խորությամբ լիցքի մեջ։*

Զանգերն ունեն տանձաձև իրան, ստորին մասում դուրս փռված բերանով։ Նրանցից մեկն իր վրա կրում է շուրջանակի ալիքաձև, սրածայր վերջավորությամբ ուռուցիկ զարդեր։ Վերին մասում կան ականջաձև բռնակներ՝ կախելու անցքերով։ Անցքեր կան և բռնակների երկու կողմերում՝ լեզվակները կախելու համար։ Վերջիններս երկաթից են և, հավանաբար, խկականներին փոխարինել են ավելի ուշ ժամանակներում։

Զանգերը պղնձից են, ձուլված կաղապարներում և, ըստ երևույթին, պատրաստվել են Կապանի պղնձի հանքերի մետաղամշակման կենտրոնում։ Երկուսն էլ ունեն միևնույն չափերը. բարձրությունը՝ 65 սմ, բռնակի բարձրությունը՝ 20 սմ, տրամագիծը ստորին մասում՝ 80 սմ, հաստությունը՝ 5 սմ, յուրաքանչյուրի քաշը մոտ 250—300 կգ։ Զանգերի վրա կան արձանագրություններ։ Այն պատրաստել է տվել Սյունիքի եպիսկոպոս, միջնադարյան հայտնի պատմիչ Ստեփանոս Օրբելյանը՝ 1302 և 1304 թվականներին։

Հայաստանի միջնադարյան զանգերի ուսումնասիրությանն առաջին անգամ անդրադարձել է ակադ. Հովսեփ Օրբելին, քննության առնելով պատահական գտնված մի զանգ, իր զարդանախշերով շատ նման Անիի հայտնի զարդաքանդակներին[2]*։ Հ. Օրբելին մեծ նշանակություն էր տալիս զանգերի լրիվ ցուցակի հրատարակմանը, իրավացիորեն դրանք կապելով զանգակատների կառուցման հետ։*

---

[1] *Արշավախմբի կազմի մեջ էին տողերիս հեղինակը և կրտսեր գիտական աշխատակից Ա. Ղոմբասարյանը։*

[2] *Տե՛ս* **И. А. Орбели**, Колокол с анийскими орнаментальными мотивами XII—XIII века, «Избранные труды», Ереван, 1963, էջ 175—187։